

*Արձանագրություն թիվ 7*

*ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2018թ հունվարի 25-ին*

**Օրակարգ**

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Բազային ֆինանսավորմամբ “Անօրգանական քիմիա,, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավարի հաշվետվություն
4. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյանը ներկայացրեց հերթական գիտխորհրդի օրակարգը:

**1. Պրոֆեսոր Տ.Վ. Ղուչիկյան**

-Օրակարգի առաջին և երկրորդ հարցերը կքննարկենք միասին՝ ամբիոնի վարիչները կներկայացնեն միանգամից և՛ քննական արդյունքների տվյալները և՛ դասալսումների արդյունքները: Խոսքը տրվում է անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռ.Ս. Հարությունյանին:

Ռ.Ս. Հարությունյան,- Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնը սպասարկում է Քիմիայի ֆակուլտետի՝ “քիմիա” և “կիրառական քիմիա”, Կենսաբանության ֆակուլտետի “կենսաքիմիա”, “կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա”, “կենսաբանություն” բաժիններին, Աշխարհագրության ֆակուլտետին ինչպես նաև ֆարմացիայի ինստիտուտին: Հաշվետու ժամանակահատվածում արտառոց դեպքեր չեն եղել, սակայն ուզում եմ նշել, որ ուսանողների ընդհանուր մակարդակն է իջել, որը պայմանավորված է դպրոցում քիմիայի առարկայի նկատմամբ ոչ լուրջ մոտեցմամբ: Պետք է նշեմ, որ անբավարար գնահատականների գերիշխող մասը ստացել են կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա բաժնի և երկրաբանության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ուսանողները: Քիմիայի ֆակուլտետի Քիմիա բաժնից պետք է առանձնացնեմ բանակից զորացրված Արմեն Գրիգորյանին, որն անբավարար է ստացել, նրան կցել են կուրսի կուրատոր Ռ.Պ. Մխիթարյանին որպեսզի ուղղի անբավարար գնահատականը: Այժմ

դասալսումների վերաբերյալ: Դասալսումներ իրականացվել են ինչպես դասախոսությունների ժամանակ, այնպես էլ լաբորատոր աշխատանքների ընթացքում: Աշխատանքները ընթանում են նորմալ հունով, առանց խախտումների: Ամբիոնը ունի մեկ երիտասարդ դասախոս՝ Մանգասարյան Լուսինե, նա վարում է միայն լաբորատոր աշխատանքներ: Լ.Մանգասարյանին խորհուրդներով օգնում և ուղղություն ենք տալիս ես և ամբիոնի պրոֆեսոր Հ.Գ.Խաչատրյանը:

Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան

Լաբորատոր աշխատանքների ժամանակ ինչ մասնակցություն է ունենում լաբորանտը:

- Մեր ֆակուլտետում, ինչպես նաև մեր ամբիոնում լաբորատոր փորձերը արվում են զույգերով, հետևաբար միայն դասախոսը չի կարողանում միանգամից հետևի բոլոր զույգերի աշխատանքներին, այստեղ աշխատանքի ընթացքի հսկումը իրականացնում է նաև լաբորանտը: Դա արվում է ելնելով ուսանողի անվտանգությունից:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյան

-Օրգանական քիմիայի ամբիոնը նույնպես սպասարկում է այդ ֆակուլտետներին: Ես էլ ուզում նշել, որ ուսանողների ընդհանուր մակարդակը նվազել է, դա պայմանավորված է ոչ միայն դպրոցում քիմիայի նկատմամբ ոչ բավարար ուշադրությունից այլև ուսանողների սոցիալական վիճակից, որովհետև նրանց մեծ մասն աշխատում է: Տոկոսային հարաբերությամբ անբավարար են ստացել կենսաբանության ֆակուլտետում (3 բաժիններում միասին) մոտ 25 %, Քիմիա բաժնից չեն ստացել 4 ուսանող, դա կազմում է կուրսի 25%, Ֆարմացիայի ինստիտուտի վիճակը լավ չէ 30%-ից ավելին չի նստացել: Պետք է նշեմ քիմիա բաժնի IV-կուրսի ուսանողները 21-ից ստացել է միայն 7 ուսանող: Առարկան ԲՄՄ քիմիան է վերջին երկու ամիսը պրակտիկայի են եղել հետևաբար իրենց ազատություն են տվել և արդյունքն այսպիսին է: Նույն ուսանողները առաջին ընթացիկի ժամանակ ստացել են 5 և բարձր գնահատական: Դասալսումները իրականացվել են ազատ գրաֆիկով: Դասընթացներն իրականացվել են նորմալ հունով անհրաժեշտության դեպքում դիտակտիկ նյութերով:

Ֆիզ. և կոլոիդ. քիմիայի ամբիոնի վարիչ - պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան

- Հիմնականում գործընկերներս նշեցին, ընդհանուր վիճակի մասին: Քիմիա բաժնից ֆիզիկական և կոլոիդ քիմիա առարկաների բարձր գնահատական ստացել են 3-ական ուսանող: Հիմնական գնահատականների սահմանն եղել է 8-12-ը: Լաբորատոր աշխատանքների մեջ մենք ընդգրկում ենք նաև հաշվարկային խնդիրների լուծում, որն անհրաժեշտ է հետագա ուսումնական փորձերի ժամանակ:

Տ.Վ.Ղոչիկյան - Լսենք բազային ֆինանսավորմամբ "Անօրգանական քիմիա,, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավար պրոֆեսոր Ռ.Ս.Հարությունյանի հաշվետվություն

Ելույթ ունեցավ Ռ.Ս.Հարությունյանը (Հաշվետվությունը կցվում է)

Հարցեր ուղղեցին թեմայի ղեկավարին պրոֆեսորներ՝ Ն.Ա.Դուրգարյանը, Կ.Ռ.Գրիգորյանը, Տ.Վ.Ղոչիկյանը, Հ.Գ.Խաչատրյանը

Ընթացիկ հարցեր.

-Պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան

Հիշեցնեմ, որ հանվել են պետական քննությունները բակալավրիատում: Ուսանողները երկրորդ կիսամյակում ազատ են և պետք է իրականացնեն լուրջ, ծավալուն գիտական աշխատանք: Պետք է լուրջ ուշադրություն դարձնել գրական ակնարկի վրա, պետք է օգտվել հնարավորինս թարմ գրականությունից: Այսինքն ավարտական աշխատանքի պաշտպանությունից հետո ուսանողը պետք է պատրաստ լինի քիմիական մեխանիզմների մեկնաբանմանը: Նշեմ նաև որ ավարտական աշխատանքի կրեդիտը 17 է:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան